**Արձանագրություն N 2**

**ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-26/1 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Դեբեդ բնակավայրի նորակառույց դպրոցին պակասող ենթակառուցվածքների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 03.04.2026թ.

ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Աղայանց

Անդամներ՝ Հ. Գինովյան

Տ. Կոմիտասյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլյան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ա. Քոչարյան

**1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցի մասին**

---

(Մ. Աղայանց)

1.1 Ընդունել ի գիտություն՝ ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-26/1 ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի հրավերը 31.03.2026թ. էլեկտրոնային եղանակով ուղարկվել է գնման ընթացակարգի հնարավոր մասնակցին՝ «ՀԱՇՕ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին: Հայտի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 03.04.2026թ. ժամը 10:00-ն: Սահմանված ժամկետում մասնակիցը ներկայացրել է հայտ:

1.2 Մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե, էլեկտրոնային փոստի հասցե | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ՀԱՇՕ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ | Երևան, Կենտրոն, Թումանյան փ., 9, 10 բն. simonyan.armen.ma@gmail.com | 5 500 000 | 5 500 000 | - | 5 500 000 |

Մասնակիցը ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:*

**2.Հայտի գնահատման մասին**

---

(Մ. Աղայանց)

2.1 «ՀԱՇՕ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ մասնակցի հայտը գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ –3, դեմ - 0:

### 3. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Մ. Աղայանց)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և սույն արձանագրության 2.2 կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ՀԱՇՕ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

### 4. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Մ. Աղայանց)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ՀԱՇՕ ՓՐՈՋԵՔԹ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

### 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Մ. Աղայանց)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------------------------------------- Մ. Աղայանց

Անդամներ՝ ---------------------------------------- Հ. Գինովյան

---------------------------------------- Տ. Կոմիտասյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------------------------------------- Ն. Նիկոլայան